Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանին

Հարգելի պարոն Ջհանգիրյան,

«Իրավաբանների հակակական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻՀԱ), ինչպես արդեն տեղեկացրել ենք, իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագրերի 2019-2021 թվականների կատարման այլընտրանքային հասարակական մշտադիտարկում, որը ենթադրում է որակական և քանակական մեթոդների կիրառությամբ Ռազմավարության գործողությունների ծրագրերի իրականացման առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: Մշտադիտարկման իրականացման հետ կապված ԻՀԱ-ն ակնկալում է Բարձրագույն դատական խորհրդի աջակցությունը:

Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագրով (N 2 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 11՝ գործողություն 5, Նպատակ 12՝ գործողություն 3, Նպատակ 13՝ գործողություններ 1,2,3,4,5,6,7) և Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագրով (N 3 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 12՝ գործողություններ 1,2, Նպատակ 13՝ գործողություն 1) Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պատասխանատու (համակատարող) մարմին:

ա) Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագիր (N 2 հավելված).

- *Նպատակ 11.*

1. Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019 թվականին ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է, արդիականացվել է պատժահամակարգը, հստակեցվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հարցերը, բարելավվել են անչափահասների նկատմամբ քրեական ներգործության միջոցները, վերանայվել է հանցանք համարվող արարքների շրջանակը, հստակեցվել են հանցանքների որակման կանոնները, վերացվել են գործող օրենսգրքում առկա հակասությունները, քրեական նոր օրենսգրքի նախագիծը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Գործողության 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է: Գործողություն 1-ի իրականացման համար նշվել է, որ ֆինանսավորում չի պահանջվում:
2. Գործողություն 2-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019 թվականին ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը լրամշակվել է՝ քաղաքացիական հասարակության, բոլոր

շահագրգիռ կողմերի, մասնագիտական համայնքի կարծիքները հաշվի առնելով: Գործողության 2-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը: Գործողություն 2-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:

3. Գործողություն 3-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին ՀՀ ԱԺ ներկայացված նախագծով ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է, արդիականացվել է պատժահամակարգը, հստակեցվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հարցերը, բարելավվել են անչափահասների նկատմամբ քրեական ներգործության միջոցները, վերանայվել է հանցանք համարվող արարքների շրջանակը, հստակեցվել են հանցանքների որակման կանոնները, վերացվել են գործող օրենսգրքում առկա հակասությունները, քրեական նոր օրենսգրքի նախագիծը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Գործողության 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 3-ի իրականացման համար նշվել է, որ ֆինանսավորում չի պահանջվում:
4. Գործողություն 4-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին քրեական վարույթի հանրային մասնակիցները և դատավորները իրազեկված են քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին: Գործողության 4-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. մշակվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրեր, անցկացվում են վերապատրաստումներ: Գործողություն 4-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
5. Գործողություն 5-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին քրեական վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում՝ դատարանները հագեցված են օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: Գործողության 5-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը մշակված են, միջոցները սկսել են տրամադրվել: Գործողություն 5-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
6. Գործողություն 6-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019 թվականին ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով հստակեցվել և կատարելագործվել են ՀՀ-ում քրեական վարույթի ընթացակարգերը, ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթներ, քրեական վարույթի մասնակիցների գործառույթները և դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները, բարելավվել են քրեական վարույթում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքերը և գործնական կառուցակարգերը, արդիականացվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ կարգավորումները, բարեփոխվել են դատական ակտերի վերանայման հետ կապված կանոնակարգումները, օրենսգիրքը համապատասխանեցվել է ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի արդյունքում ներկայացված առաջարկներին: Գործողության 6-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը

մշակվել է: Գործողություն 6-ի իրականացման համար նշվել է, որ ֆինանսավորում չի պահանջվում:

7. Գործողություն 7-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019 թվականին ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է քաղաքացիական հասարակության, բոլոր շահագրգիռ կողմերի, մասնագիտական համայնքի կարծիքները հաշվի առնելով: Գործողության 7-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ամփոփաթերթը: Գործողություն 7-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
8. Գործողություն 8-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով հստակեցվել և կատարելագործվել են ՀՀ-ում քրեական վարույթի ընթացակարգերը, ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթներ, քրեական վարույթի մասնակիցների գործառույթները և դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները, բարելավվել են քրեական վարույթում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքերը և գործնական կառուցակարգերը, արդիականացվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ կարգավորումները, բարեփոխվել են դատական ակտերի վերանայման հետ կապված կանոնակարգումները, օրենսգիրքը համապատասխանեցվել է ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի արդյունքում ներկայացված առաջարկներին: Գործողության 8-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ԱԺ: Գործողություն 8-ի իրականացման համար նշվել է, որ ֆինանսավորում չի պահանջվում:
9. Գործողություն 9-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին քրեական վարույթի հանրային մասնակիցները և դատավորները իրազեկված են քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին: Գործողության 9-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. մշակվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրեր, անցկացվում են վերապատրաստումներ: Գործողություն 9-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
10. Գործողություն 10-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին քրեական վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում՝ դատարանները հագեցված են օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: Գործողության 10-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրականփոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը մշակված են, միջոցները սկսել են տրամադրվել: Գործողություն 10-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:

➢ *Նպատակ 12.*

1. Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին օրենսդրությունը համապատասխանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդի միտումներին: Գործողության 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. օրենքի նախագծերը մշակված են և

ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված այլ միջոցները:

2. Գործողություն 2-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին օրենսդրությունը համապատասխանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդի միտումներին: Գործողության 2-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 2-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված այլ միջոցները:
3. Գործողություն 3-ի արդյունքով նախատեսվում է, որ 2019-2020 թվականներին «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով գույքագրվել և լուծվել են օրենսգրքի կիրառման ընթացքում ծագած խնդիրները: Գործողության 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայաց-վել է ՀՀ ԱԺ: Գործողություն 3-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված այլ միջոցները:

➢ *Նպատակ 13.*

1. Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծման նախադրյալների ապահովում: Գործողության 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
2. Գործողություն 2-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով կարգավորվել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը: Գործողության 2-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 2-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
3. Գործողություն 3-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ամրագրվել են վարչական դատավարությունում ծանուցման նոր ընթացակարգեր: Գործողության 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 3-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
4. Գործողություն 4-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի

նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ամրագրվել են գրավոր և պարզեցված վարույթներ: «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողության 4-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ««ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 4-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:

5. Գործողություն 5-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով սահմանվել է պետական տուրք վճարելու պարտականություն: Գործողության 5-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 5-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
6. Գործողություն 6-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով կարգավորվել են վարչական դատավարությունում հատուկ վարույթները: Գործողության 6-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 6-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
7. Գործողություն 7-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը իրականացված է: Գործողության 7-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 7-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
8. Գործողություն 8-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և նախատեսում է վարչական կարգով պարտադիր բողոքարկման դեպքերի սահմանում: Գործողության 8-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 8-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:
9. Գործողություն 9-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և նախատեսում է վարչական կարգով պարտադիր բողոքարկման դեպքերի սահմանում և վերադասության կարգով վարչական ակտի բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ: Գործողության 9-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 9-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:

10. Գործողություն 10-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և նախատեսում է վարչական իրավախախտումների ոլորտում խնդիրների կարգավորում: Գործողության 10-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 10-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված աղբյուրները:

բ) Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագիր (N 3 հավելված).

➢ *Նպատակ 12.*

1. Գործողության 1-ով 2021 թվականին մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հաշտարարության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր, նախագծերը սահմանված կարգով շրջանառվել և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ 2022 թվականին ««ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հաշտարարության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով կատարելագործվել է դատարանի կողմից հաշտարարության նշանակման ընթացակարգը: Գործողության 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հաշտարարության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակված են և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն կամ օրենքով չարգելված այլ միջոցները:
2. Գործողության 2-ով 2021 թվականին օրենքի նախագծերը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Գործողություն 2-ի արդյունքով նախատեսվում է, որ 2022 թվականին օրենսդրությունը համապատասխանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդի միտումներին: Գործողության 2-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 2-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն կամ օրենքով չարգելված այլ միջոցները:
3. Գործողության 3-ով 2021 թվականին մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Գործողություն 3-ի արդյունքով նախատեսվում է, որ 2022 թվականին «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով գույքագրվել և լուծվել են օրենսգրքի կիրառման ընթացքում ծագած խնդիրները, վերանայել հայցադիմումը վերադարձնելու ինստիտուտը: Գործողության 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է

ՀՀ ԱԺ: Գործողություն 2-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն կամ օրենքով չարգելված այլ միջոցները:

- *Նպատակ 13.*

1. Գործողության 1-ով 2021 թվականին մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ 2022 թվականին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով կատարելագործվել են վարչական դատավարության մի շարք ինստիտուտներ: Գործողության 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն կամ օրենքով չարգելված այլ միջոցները:

Ուստի հաշվի առնելով վերոնշյալը, խնդրում ենք, մինչև 2022 թվականի հունվարի 21-ը ներառյալ, ըստ 2019, 2020, 2021 թվականների իրականացված ժամանակահատվածների և առանձին գործողությունների, տրամադրել Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագրով (N 2 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 11՝ գործողություն 5, Նպատակ 12՝ գործողություն 3, Նպատակ 13՝ գործողություններ 1,2,3,4,5,6,7) և Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագրով (N 3 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 12՝ գործողություններ 1,2, Նպատակ 13՝ գործողություն 1) արդյունքների և ստուգման միջոցների իրականացումը վկայող տեղեկատվություն, իսկ այն գործողությունների դեպքում, որոնց կատարման արդյունքները և ստուգման միջոցները նախատեսված են եղել իրավական ակտերի նախագծերի մշակում, կառուցակարգերի, այդ թվում էլեկտրոնային համակարգերի ներդնում, ուսումնասիրությունների, հիմնավորումների, տեխնիկական նկարագրերի, վերապատրաստումների, հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների կամ այլ միջոցառումների իրականացում և դրանք որևէ եղանակով ամփոփված են կամ դրանց իրականացման մասին հասանելի աղբյուրներում առկա է համապատասխան տեղեկատվություն, ապա մշտադիտարկման ընթացքում դրանց որակական գնահատման նպատակով խնդրում ենք տրամադրել դրանց ամփոփումները (օրինակ՝ միջոցառումների (դասընթացների) մասնակիցների քանակը՝ ըստ պատկան մարմինների և մասնակից այլ կազմակերպությունների, պատկան մարմիններից և շահագրգիռ այլ կազմակերպություններից ստացված կարծիքների ամփոփումը և այլն), իրավական ակտերն ու դրանց հիմնավորումները, ինչպես նաև դրանց էլեկտրոնային հղումները կամ կցել վկայող համապատասխան փաստաթղթերը:

Խնդրում ենք նաև, այն գործողությունների համար, որոնց համար ֆինանսական աղբյուր է նախատեսված պետական պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները, տրամադրել այդ գործողությունների ֆինանսավորման գումարի չափի և ֆինանսավորման աղբյուրների մասին համապարփակ տեղեկատվություն:

Նաև տեղեկացնում ենք, որ Ռազմավարությունից բխող 2019-2020 և 2021-2023 գործողությունների ծրագրերով (N 2 և N 3 հավելվածներ) մշտադիտարկման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է առցանց ֆոկուս խմբային քննարկումների իրականացում հիմնական շահագրգիռ կողմերի և Գործողությունների ծրագիրն իրականացնողների

(կատարողների, համակատարողների) հետ: Հաշվի առնելով վերոգրյալը, 2022 թվականի հունվարի 31-ին, ժամը 11:00-ին **ՀՀ արդարադատության, ֆինանսների նախարարությունների, Բարձրագույն դատական խորհրդի, ՀՀ արդարադատության ակադեմիայի, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ ոստիկանության և ՀՀ կենտրոնական բանկի** ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացնում ենք առցանց ֆոկուս խմբային քննարկում, որի ընթացքում օգտագործվելու են նաև սույն գրությամբ հարցվող տեղեկությունները:

Առցանց ֆոկուս խմբային քննարկման ընթացքում նախատեսված է օգտագործել սույն գրությանը կից ներկայացված Հավելված 1-ում նշված հարցաշարը՝ դրանում նշված յուրաքանչյուր պատասխանատու (համակատարող) մարմնին վերաբերելի գործողությունների շրջանակներում:

Խնդրում ենք ֆոկուս խմբային քննարկմանը ապահովել Բարձրագույն դատական խորհրդի 1-ից 3 ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք տիրապետում են Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագրով (N 2 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 11՝ գործողություն 5, Նպատակ 12՝ գործողություն 3, Նպատակ 13՝ գործողություններ 1,2,3,4,5,6,7) և Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագրով (N 3 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 12՝ գործողություններ 1,2, Նպատակ 13՝ գործողություն 1) ընթացքին, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պատասխանատու (համակատարող) մարմին, տրամադրելով ներկայացուցիչներ անուն ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Քննարկումը կանցկացվի առցանց, հետևյալ հղմամբ. https://zoom.us/j/95847984203?pwd=Y2dXRUk1dWJZSEg3VENoVnRjamdvUT09,

Հանդիպման կոդը՝ 958 4798 4203, գաղտնաբառը՝ 179938:

Խնդրում ենք սույն գրության պատասխանը և հարցվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ուղարկել ԻՀԱ-ի info@armla.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Հարգանքով՝

Կարեն Զաքոյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ

Կատարող՝

Սյուզաննա Սողոմոնյան

Դատաիրավական և հակակոռուպցիոն հարցերով փորձագետ